

**ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ
ՏՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կետադրությունը օգնում է հասնելու գրավոր տեքստի բովանդակության հնարավոր լիարժեք ընկալման: Այս առումով հայերենի կետադրությունը, դարերի ընթացքում մշակվելով և կատարելագործվելով, հիմնականում բավարարում է գրողի և ընթերցողի պահանջները: Սակայն նկատենք, որ ժամանակի ընթացքում այս կամ այն իրողության կետադրությունը խիստ կանոնակարգելու, միօրինակ դարձնելու միտումը երբեմն հանգեցրել է լուծումների, որոնք որոշ չափով դժվարացնում են գրավոր խոսքի կազմակերպումը: Ձեռնարկներում քիչ չեն այն դեպքերը, երբ միևնույն երևույթի տրոհության համար սահմանվում են տարբեր կանոններ: Եղած տարակարծությունները երբեմն պատճառ են դառնում կետադրական գույզաձևության: Եվ ոչ մասնագետի համար երբեմն դժվար է լինում կողմնորոշվել, թե որին պետք է նախապատվություն տրվի, կամ որ տարբերակն է ճիշտ և ընդունելի:

Արևելահայերենում տասնամյակներ շարունակ խնդրահարույց է վերաբերականների տրոհումը. նկատվում է դրանց մի մասի երկակի կամ գույզաձև տրոհության միտումը: Ուստի որոշ սկզբունքներ, մեր կարծիքով, վերանայման կամ մասնակի փոփոխության կարիք ունեն: Խնդիրը կարևորում ենք՝ բացառապես հիմք ընդունելով արևելահայերենի կետադրության արդի վիճակը և հատկապես ուսումնական ձեռնարկներում արձանագրված օրենքներն ու օրինաչափությունները¹: Խոսքը վերաբերում է մի դեպքում՝ որոշ վերաբերականներ տրոհել-չտրոհելու, մյուս դեպքում՝ ինչպես տրոհելու հարցին:

1. Նախ անդրադառնանք այն վերաբերականներին, որոնց տրոհումը, ըստ կանոնի, պետք է պայմանավորվի նախադասության մեջ

¹ Իհարկե, լեզվական քննությունը առավել համոզիչ է դառնում, եթե հարցը դիտարկվում է զարգացման ընթացքի մեջ, հաշվի են առնվում նաև լեզվի տարբեր շրջափուլերում նույն իրողության առնչությամբ եղած փաստերը: Սակայն մեր լեզվի զարգացման նախորդ փուլերում կետադրական օրինաչափ երևույթներ ու ժառանգորդական կապեր փնտրելը և այսօր դրանց վրա հիմնվելը ճիշտ ճանապարհ չէ. այդ փուլերում հայերենի կետադրությունը հեռու է մշակված ու կանոնավոր լինելուց: Ինչ վերաբերում է արևմտահայերենին, ապա և՛ դասական, և՛ արդի արևմտահայերենում առհասարակ տրոհության անմիօրինակությունները շատ են: Ժամանակակից լեզվաբաններն այն կարծիքին են, որ արդի արևմտահայերենը փորձում է հետևել արևելահայերենի կետադրության սկզբունքներին: Ընդ որում, այստեղ ևս գործնականում իշխում է վերաբերականների երկակի կետադրության միտումը:

ունեցած դրանց դիրքով: Մակայն ըստ ամենայնի այդ վերաբերականները տրոհելը կամ չտրոհելը կարելի է հավասարապես ընդունելի համարել՝ անկախ նախադասության մեջ գրադեցրած դիրքից: Օրինակ՝ «Նա *հհարկե/իրոք/ անշուշտ/ախր/հարկավ* շուտով կգա» նախադասության մեջ գործածված վերաբերականը կարելի է ն՝ տրոհել, և՛ չտրոհել: Երկակի տրոհումը բխում է բանավոր խոսքի հնչերանգային որակներից, որը, սակայն, գործող կանոններով գրեթե նկատի չի առնվում:

Այսպես: Դպրոցական գործող դասագրքում վերաբերականների տրոհության մասին կարդում ենք. «Ամբողջ նախադասությունը կամ եղելությունը եղանակավորող վերաբերականներն առանձին հնչերանգով անջատվում են նախադասության անդամներից: Գրավոր խոսքում այդ անջատումը կատարվում է ստորակետերով, ինչպես *Իրոք*, նրան չէր հաջողվել որևէ աշխատանք գտնել: Բժիշկ Հովակիմյանը, *անշուշտ*, ոսկի ձեռքեր ունի»²: Եվ այսքանը: Որքան էլ հասկանալի է վերաբերականների տրոհումը միօրինակացնելու դասագրքային միտումը, այսուհանդերձ դժվար է այն անվերապահ ընդունելը: Հենց այս օրինակներն արդեն վիճահարույց են, որովհետև նկատի չեն առնված բանավոր խոսքի արտասանական-հնչերանգային յուրահատկությունը, խոսողի տրամաբանական ելակետը: Ըստ էության, միօրինակացման պարտադրանք է ներկայացված մի իրողության, որում երկակի տրոհումը թերևս առավել նպատակահարմար է ու ճիշտ: Գուցե դասագրքի ձևաչափը հնարավորություն չի ընձեռում երևույթը առավել մանրամասնելու, սակայն թերևս հնարավոր էր հիմք ունենալ հնչերանգային գործունը՝ զանց չառնելով այն հանգամանքը, որ հնչերանգային տարբերակները հաճախ քերականական պայմանավորվածություն ունեն և նշում են շարույթների տարբեր սահմանները: Ըստ այսմ՝ կարելի էր ամփոփ առաջարկել կետադրական երկձևության մի սահմանում ևս: Այսպես՝ այդ բառերը կարող են արտաբերվել նաև նախադասության մյուս անդամների հետ միասնաբար, ուստի և կարելի է դրանք չտրոհել:

Նշված վերաբերականները անպայման տրոհելու կանոն է սահմանում Ս. Աբրահամյանը «Հայերենի կետադրություն» ուսումնական ձեռնարկում. «Ստորակետ դրվում է... միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների և նախադասության հիմնական մասի միջև. ա) *Իհարկե*, նրա նման ես չեմ կարող պատմել...»³: Ըստ էության, այս դեպքում նույնպես գործ ունենք սոսկ կանոնի հետ. հավելյալ բացատրություններ չկան:

Վերաբերականներին կետադրությունը մանրամասն ներկայացնում է «Հայոց լեզու» ձեռնարկը. «Ամբողջ նախադասության իմաստը եղանակավորող վերաբերականները մեծ մասամբ տրոհվում են՝ իբրև միջանկյալ բառեր՝ Նա, *անշուշտ*, կկատարի խոստումը: *Դե*, գնացինք:

² Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, 8-րդ դասարան, Եր., 2012, էջ 31:

³ Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրություն, Եր., 1999, էջ 25:

Ի դեպ, ես այդ մասին գիտեի»⁴: Ապա նշվում է, որ նախադասության միայն մեկ անդամի երանգավորող վերաբերականները չեն տրոհվում: Եվ դրանք ներկայացվում են համապատասխան խմբերով՝ • հաստատական՝ անպայման (երբեմն էլ՝ անշուշտ, անկասկած, անտարակույս, արդարև, իհարկե, իսկապես, իրավամբ, իրոք, հարկավ, հիրավի), • երկբայական (ասես, արդյոք, գուցե, դժվար թե, թերևս), • սաստկական (անգամ, նեթ, իսկ, իսկ և իսկ, հենց, մանավանդ, մինչև իսկ, նամանավանդ), • կամային (արի, եկ, եկեք, թող, մի), • բաղձանքի (երանի (թե), երնեկ, ուր է թե), • ցուցական (ահա, ահավասիկ)⁵: Այսպիսի դասակարգմամբ, իհարկե, հստակորեն պարզաբանվում է իրողությունը, սակայն գուտ գործնական (պրակտիկ) կիրառության տեսակետից կարծես թե դժվարություն է ծագում: Նախ՝ որոշ վերաբերականներ պարտադիր տրոհելու պահանջը կրկին շրջանցում է խոսքի հնչերանգային, այն է՝ **դադարով** կամ **առանց դադարի** արտասանելու առանձնահատկությունը, որն առհասարակ խոսողի (գրողի) ընտրությունն է: Ապա՝ գրավոր խոսք կառուցելիս մի կողմից՝ ոչ մասնագետի համար փոքրինչ դժվար է որոշելը՝ ամբողջակա՞ն նախադասությունն է եղանակավորվում այդ վերաբերականով, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ կիրառական այդ նշանակությունը գուցե դյուրին բացահայտելի է, բայց դա այնքան էլ վճռորոշ դեր չունի խոսքի հասցեագրման ու բովանդակության ընկալման մեջ: «Նա **անշուշտ** կկատարի խոստումը» նախադասության մեջ **անշուշտ** վերաբերականը կամ իմաստով սրան համարժեք մեկ այլ եղանակավորող բառ չտրոհելը որևէ կերպ չի խոչընդոտում ընկալումը, նաև չի խախտում խոսքի ճշտությունը կամ հստակությունը: Ուստի թերևս կարելի է ընդունելի համարել չտրոհված տարբերակը նույնպես:

Վերաբերականների կետադրությունն ավելի բարդ է ներկայացվում հայերենի կետադրությանը վերաբերող այլ աշխատություններում: Ուսումնական ձեռնարկներից մեկում կարդում ենք. «Պետք է հաշվի առնել, որ եղանակավորող բառի շարադասության փոփոխությունը կարող է փոխել նրա գործառույթը: Օրինակ՝ «Նա **իրոք** փրկեց մեզ» նախադասության մեջ **իրոք** բառը եղանակավորում է **փրկեց** բային: «**Իրոք** նա փրկեց մեզ» նախադասության մեջ արդեն եղանակավորել է **նա** դերանվանը, ուստի այդ դեպքում էլ չի տրոհվում: Եթե տրոհվի, դարձյալ կվերաբերի **փրկեց** բային: Հետևաբար խիստ կարևոր է եղանակավորող բառը ճիշտ շարադասությամբ գործածելը: Իսկ «Այդ օրերի հերոսը **իհարկե** նա էր» նախադասության մեջ **իհարկե** բառը եղանակավորում է **նա** բառին, գտնվում է անմիջապես նրա կողքին և չի տրոհվում: «**Իհարկե**, այդ օրերի հերոսը նա էր» նախադասության մեջ այդ իմաստը պահպանվել է, սակայն **իհարկե** բառն արդեն հեռացել է

⁴ Յու. Ավետիսյան, **Հ. Զաքարյան**, Հայոց լեզու, Եր., 2012, էջ 270:

⁵ Տե՛ս նույն տեղը:

նա-ից, ուստի և տրոհվել է ստորակետով»⁶: Հարցը նույն կերպ է ներկայացված նաև Չ. Զաքարյանի «Կետադրական բառարան» ուսումնական ձեռնարկում⁷: Կարծում ենք՝ անհարկի մանրամասներով բարդացված է հատկապես հաստատական վերաբերականների մի մասի տրոհումը: Տրոհումը գրավոր խոսքում բանավոր խոսքի դադարների արտահայտությունն է նաև: Առաջնորդվելով այս համոզմամբ՝ առողանական ենթադրելի դադար ունեցող իրողությունը տրոհելու համար, կարծում ենք, առավել նպատակահարմար ու օգտակար կլինի թողնել **ազատ ընտրության** հնարավորություն, որը պայմանավորված կլինի ոչ թե եղանակավորող բառի՝ նախադասության մեջ զբաղեցրած դիրքով, այլ խոսքի նպատակով, խոսքի տրամաբանական դադարով: Մանավանդ այս դեպքում տրոհումը խախտելիս չեն փոխվում քերականական հարաբերությունը, կառույցի նշանակությունը: Այս բառերի ազատ տրոհության հնարավորությունը բնավ չի հակասում լեզվի ներքին օրինաչափություններին և ոչ մի կերպ «դեմ չի գնում» մտքի ճշգրիտ ընկալմանը: Այս առումով կարևոր է Գ. Զահուկյանի դիտարկումը. «Կետադրական կանոնների մշակման ժամանակ անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվում, ժամանակակից որոշ լեզվաբանների տերմինաբանությամբ ասած, «խոսողի քերականության» և «լսողի քերականության» տարբերությունները: Եվ իրոք, ո՞ւմ շահերից է ելնում հայերենի կետադրության արդի համակարգը՝ գրողի, թե՛ ընթերցողի, ուզում է հեշտացնել գրողի, թե՛ ընթերցողի գործը: Մեր կետադրության կանոնները մշակողները կարծեք թե այս հարցի մասին ընդհանրապես չեն էլ մտածում: Եթե նկատի ունենանք, որ մի կողմից՝ խիստ կանոնարկված և մանրամասնված կետադրությունը դժվարացնում է գրողի գործը և որոշ չափով կաշկանդում ընթերցողին, գեղարվեստական երկի գրման, ընկալման և վերարտադրության ժամանակ թուլացնում երևակայության և ստեղծագործության դերը, մյուս կողմից՝ պակասավոր կետադրությունը դժվարացնում է ընթերցողի կողմից տեքստի ճիշտ ընկալումը, ապա կհանգենք այն պարզ եզրակացությանը, որ պետք է ընտրել ոսկե միջինը, **թույլ տալ կետադրության որոշ ազատություն, միջոցների ընտրության հնարավորություն**»⁸ (ընդգծումը մերն է - Լ. Ս.): Կետադրական նշանները գործածվում են միայն գրության մեջ, իսկ ընդամենը մի քանի բառի տրոհության կանոնների մանրամասնումը էապես խանգարում է արագ կողմնորոշվելուն, որի պատճառով տրոհության այս կամ այն դեպքը կիրառողի համար երբեմն դառնում է խրթին, կասկածելի, անհստակ:

Անդրադառնալով վերաբերականների տրոհության հարցին՝ Մ. Ա-

⁶ Ա. Սարգսյան, Ժամանակակից հայերենի կետադրությունը, Եր., 2005, էջ 49:

⁷ Տե՛ս Չ. Զաքարյան, Կետադրական բառարան, Եր., 2013, էջ 201, 203:

⁸ Գ. Զահուկյան, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր հասարակական գիտությունների», ¹ 7, Եր., 1990, էջ 77:

սատրյանը գրում է. «Գրավոր խոսքում եղանակավորող բառերը տրոհելու կամ չտրոհելու, այսինքն՝ ստորակետերով անջատելու կամ չանջատելու հարցում միշտ առաջնորդ պետք է ունենալ կենդանի արտասանությունը»⁹:

Քննարկվող բառերի տրոհության համար Գ. Գարեգինյանը տալիս է ավելի պարզ և պատճառաբանված առաջարկ: Ներկայացնելով ստորակետի գործածության դեպքերը՝ միջանկյալ և ներդրյալ բառերի տրոհության մասին լեզվաբանը գրում է. «Ստորակետ դրվում է... միջանկյալ և ներդրյալ բառերը, բառակապակցությունները և նախադասությունները հիմնական մասից անջատելու, առանձնացնելու համար, ինչպես՝ Մենք, **իհարկէ**, նրան կօգնենք: ...Նա, **անշուշտ**, այդ շատ լավ հասկանում է»¹⁰: Ապա նույն հատվածում ծանոթությամբ հավելում է. «Միջանկյալ համարված բառերը **միշտ չէ, որ տրոհվում են արտասանական դադարով և առանձնանում** (ընդգծումը մերն է - Լ. Ս.). հաճախ նրանք արտաբերվում են նախադասության մյուս անդամների հետ միասնաբար, ուստի այս դեպքում հարկ չկա դրանք ստորակետով անջատել: Օրինակ՝ **իհարկէ, անշուշտ, գուցէ, հարկավ** և նման բառերը կարող են և՛ տրոհվել, և՛ չտրոհվել, հետևաբար կարող են և՛ ստորակետով բաժանվել, և՛ չբաժանվել նախադասության մյուս անդամներից: Օրինակ՝ «Մենք, **իհարկէ**, նրան կօգնենք» և «Մենք **իհարկէ** նրան կօգնենք»¹¹: Ակնհայտ է, որ այս դեպքում լեզվաբանը տրոհումը ոչ թե բխեցնում է քերականական «չոր» կանոններից, այլ նախ և առաջ նկատի է առնում խոսքի հնչերանգային-առոգանական յուրահատկությունները: Կարծում ենք՝ անհակասական և ընդունելի սկզբունք է: Նաև այս հանգամանքը շրջանցելու դեպքում հարց է ծագում, թե ինչպես պիտի տրոհել, երբ ձայնավորով սկսվող եղանակավոր բառին նախորդում է որոշյալ առումով դրված բառ, ինչպես՝ «Հարցն **անշուշտ** բոլորին հետաքրքրում է», կամ՝ «Գործն **իրոք** անթերի էր կատարվել» և այլն: Ստորակետը ինքնին ենթադրում է դադար, որը գուցե գրողը հատուկ նպատակով չի ուզում ընդգծել: Բացի այդ՝ ուսումնական ձեռնարկները նմանատիպ կառույցների տրոհումը ստորակետով համարում են անհանձնարարելի¹²:

Տրոհել-չտրոհելու ազատության տեսակետը պաշտպանվում է նաև վերջերս հրատարակված ուսումնական ձեռնարկներից մեկում, որտեղ կարդում ենք. «Շարադրողի հայեցողությանը պիտի թողնել վերաբերականներով արտահայտված միջանկյալ բառերի կետադրության հարցը: Հավասարապես ընդունելի պետք է համարել թե՛ դրանց

⁹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977, էջ 331:

¹⁰ Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու. Բարդ նախադասություն, Եր., 1984, էջ 397:

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 162:

տրոհումը, թե՛ անտրոհ գործածությունը»¹³: Երկակի տրոհության գոյության իրավունքը հաստատվում է նաև բնագրային տարատեսակ օրինակներով՝ վերցված գործառական տարաբնույթ տեքստերից: Փաստական հիմք ընդունելով «Արևակ»-ի հարուստ շտեմարանը՝ նկատում ենք, որ **իհարկե, անշուշտ, արդարև, իրոք, հարկավ, ախր** և այլ վերաբերականներ, անկախ նախադասության մեջ զբաղեցրած դիրքից, և՛ տրոհված են, և՛ ոչ: Ընդ որում, տրոհվելու և չտրոհվելու դեպքերը գրեթե հավասար են¹⁴: Այս բառերի տրոհության արդի վիճակը, ինչպես նաև լեզվի ներքին օրինաչափությունները ներկայումս ըստ ամենայնի ընձեռում են տրոհել-չտրոհելու ազատ հնարավորություն:

2. Մյուս խնդիրը վերաբերում է այն եղանակավորող բառերի տրոհությանը, որոնք, իրենց նախադաս և միջադաս դիրքերով պայմանավորված, ունեն տարբեր կետադրություն: Խոսքը **այսպիսով, ավելին, ընդ/ըստ որում, ասենք, ենթադրենք, որպես կանոն, մի խոսքով** և այլ վերաբերականների մասին է: Դպրոցական դասագիրքը և կետադրության ձեռնարկների մի մասը սրանց տրոհությանը չեն անդրադառնում: Հարցի առնչությամբ Ս. Աբրահամյանը նշում է, որ բույժ է դրվում մեկնական **այսպես, այսպիսով, այն է** և նման բառերի վրա: Ապա ծանոթությամբ հավելում է, որ **այսպիսով, ուրեմն, օրինակ** և նման մեկնական բառերը միջադաս գործածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորակետերի մեջ¹⁵: Ճիշտ նույն սկզբունքն է ներկայացվում նաև «Կետադրական բառարանում».
ընդ/ըստ որում, ավելին, այսպիսով, ասենք, ենթադրենք, մի խոսքով, այսպես ասած, որպես կանոն վերաբերականները նախադասության սկզբում գործածվելիս տրոհվում են բույժով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով: Օրինակ՝ «**Այսպիսով**՝ արտակարգ իրավիճակը կարելի է հաղթահարված համարել», «Բոլոր ելույթ ունեցողները, **այսպիսով**, հանգեցին նույն եզրակացությանը»¹⁶: Գործնականում, սակայն, նշված բառերի կետադրությունը որոշակիորեն այլ պատկեր ունի. անկախ նախադասության մեջ զբաղեցրած դիրքից՝ հաճախադեպ է **ստորակետով** տրոհումը: Հիմք ընդունելով և՛ արդի մամուլի (այդ թվում՝ գիտական պարբերականների), և՛ «Արևակ»-ի տվյալները՝ նկատել ենք, որ տարաբնույթ տեքստերում, օրինակ, **ընդ որում** վերաբերականի նախադաս գործածության 20 դեպքից 12-ը կետադրված է ստորակետով, 5-ը՝ բույժով, 3-ը՝ կետադրված չէ: **Այսպիսով** բառի նախադաս գործածության 20 դեպքից 17-ը տրոհված է ստորակետով, 2-ը՝ բույժով, 1-ը՝ չտրոհված: Նշենք, որ վիճակագրություն կատարելիս նկատի ենք առել

¹³ Դ. Գյուլգասյան, Գրական արևելահայերենի արտահայտաբանություն, Եր., 2015, էջ 242:

¹⁴ Հմմտ. www.eanc.net/EANC/search/?interface_language=am

¹⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 34-35:

¹⁶ Հ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 202:

2000 թ. հետո եղած պարբերական և գիտական մամուլի, նաև գեղարվեստական գրականության օրինակները: Գրեթե նույն տվյալներն են նաև **որպես կանոն, ասենք, ենթադրենք, ավելին** վերաբերականների տրոհության դեպքերում. նախադաս դիրքում հաճախադեպ է ստորակետի գործածությունը՝ 20/3 կամ 20/4 հարաբերությամբ: Հաշվի առնելով երևույթի տարածվածությունը՝ այսպիսի տրոհումը նույնպես կարելի է ճիշտ համարել, մանավանդ որ նախադաս դիրքում բութ, միջադաս դիրքում ստորակետեր դնելով՝ եղանակավորող բառի նշանակությունը (կամ իմաստային նրբերանգր) չի փոխվում: Ի դեպ, նկատելի է, որ նախադաս դիրքում այս վերաբերականների՝ ստորակետով տրոհումը կարծես թե ձգտում է միօրինակացման: Ուստի այս դեպքում նույնպես կարելի է ընդունելի համարել երկակի կետադրությունը:

Ընդհանրապես պայմանավորված վերաբերականների իմաստային բազմազանությամբ՝ առանձին բառերի կամ կիրառությունների դեպքում թերևս արժե թույլատրելի համարել նաև այնպիսի տրոհումը, որը թեև որևէ կանոնով ամրագրված չէ, սակայն նպատակահարմար է, չի հակասում տրոհության օրինաչափություններին և բխում է խոսքի նպատակադրումից: Օրինակ՝ կանոնի համաձայն՝ **ընդհակառակը** վերաբերականը նախադասության անդամներից պետք է անջատվի ստորակետերով: Սակայն առաջնորդվելով հենց տրոհության ներքին տրամաբանությամբ, կարծում ենք, ավելի նպատակահարմար և հնարավոր տարբերակ կարող է լինել միջակետի կամ բութի գործածությունը: Օրինակ՝ «Ես ոչ թե անհամբեր սպասել եմ կուսակցության որոշմանը, այլ **ընդհակառակը**. մտածում էի, որ երբեք չեմ կարողանա խուսափել կուսակցության որոշումից» («Առավոտ», 03.07.2007), «Ռուսաստանը պահանջում էր այդ կառույցի լուծարումը, սակայն, **ընդհակառակը**՝ ՆԱՏՕ-ն ընդլայնվեց» («Ազգ», 01.11.2008), «Իսկ եթե դա վարպետորեն է արվում, այլևս չի հնչում անհավանական, **ընդհակառակը**՝ ընկալվում է ավելի իրական, քան սովորական խոսքը»¹⁷: Կամ՝ **այսպես, ավելին** բառերը, ինչպես նշվել է, նախադաս գործածվելիս պետք է տրոհվեն բութով, բայց պայմանավորված խոսքի յուրահատկությամբ, խոսքային միջուկը ընդգծելու միտումով՝ թերևս սխալ պիտի չհամարվի միջակետով տրոհումը: Օրինակ՝ «**Ավելին**. եղանակավորող բառերը կարող են դրվել նաև ածականների վրա...»¹⁸, «**Ավելին**. մեզ մոտ ստեղծվել են բոլոր հասարակական-քաղաքական ու մշակութային անհրաժեշտ պայմանները...»¹⁹, «Որոշակի տեխնիկական խնդիրների պատճառով օդա-

¹⁷ Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Լ. Թեյլան և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 244:

¹⁸ Վ. Ավագյան, Եղանակավորող բառերի շարահյուսական արժեքը, «Պատմաբանասիրական հանդես», 1972, № 3, էջ 208:

¹⁹ Էդ. Աղայան, Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1971, № 1, էջ 88:

պարիկը չի կարող հասնել նշանակետին, *ավելին*. շուտով ընկնելու է ջրի մեջ»²⁰, «*Այսպես*. որևէ առիթով (ասուլիս, խորհրդակցություն, տոնավաճառ), մատակարարի ու գնորդի հանդիպման ընթացքում կարճատև հարց ու պատասխանի, անգամ ռեպլիկների փոխանակումը....» (ն. տ., էջ 66):

Օրինակները հիմնականում լեզվաբանական աշխատություններից են: Կարծում ենք՝ հեղինակները կանոնը շրջանցել են հատուկ միտումով: Եթե խոսողն այդ բառերով նպատակ ունի արտահայտելու իր ամփոփիչ, լրացական վերաբերմունքը, նպատակ ունի հնչերանգային շեշտադրումով ընդգծելու բովանդակային կողմը, ապա եղանակավորող բառը նախադաս դիրքում կարող է տրոհվել նաև միջակետով: Դրանից կարծես թե քերականական որևէ նորմ չի խախտվում: Տեղին է հիշել Ա. Չեխովի հայտնի խոսքը. «Կետադրության նշանները ընթերցանության նոտաներն են»: Եվ ըստ լեզվակիրառողի՝ ընթերցանության համար ինչ-ինչ դեպքերում միջակետի գործածությունը դառնում է առավել արդարացված. գրավոր խոսքում այն ամրագրում է բանավոր խոսքի տևական դադարի հաղորդակցային արժեքը՝ ընթերցողի ուշադրությունը սևեռելով այդ բառին հաջորդող մտքի վրա: Նշված բառերի տրոհության այս տարբերակը չունի նախորդների տարածվածությունը և գուցե փոքր-ինչ անսովոր կամ արտառոց է թվում, սակայն, ըստ էության, խոր հակասություն չկա կետադրական գուգաձևությունների միջև: Այս առումով հատկանշական է Գ. Ջահուկյանի դիտարկումը: Ջանց առնելով լրացական գործառությունները, որոնք կապվում են նախադասության մասերի փոխհարաբերության հետ և կանոնավորվում են հատուկ պայմանավորվածությամբ (որոշումներով և հրահանգներով)՝ լեզվաբանը տրոհության նշանների մեջ դադարի գրավոր նշանակման համար առանձնացնում է պայմանական հինգ աստիճան՝ 1) սովորական կամ բացատային (դադար բառերի միջև), 2) ստորակետային՝ ստորակետով արտահայտվող, 3) բութային՝ բութով, 4) միջակետային՝ միջակետով, և 5) վերջակետային՝ վերջակետով արտահայտվող²¹: «Այս տարբերությունները,- գրում է Գ. Ջահուկյանը,- բացարձակ արժեք չունեն, այլ հարաբերական՝ ըստ խոսքի անհատական տեմպի տարբերությունների և նախադասության հատվածների գործառական փոխհարաբերության»²²: Կարծում ենք՝ նշված վերաբերականների կետադրության համար նույնպես կարելի է թողնել որոշ չափով ազատ ընտրության հնարավորություն՝ առաջնորդվելով հենց այս մոտեցմամբ:

²⁰ **Տ. Խաչատրյան**, Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012, էջ 141:

²¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 117:

²² Նույն տեղում:

Ամփոփենք: Նկատելի է, որ ժամանակի ընթացքում որոշակի հակասություն է առաջացել կանոնի և դրա իրացման միջև: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, խոսքի «...կառուցման առարկայական օրինաչափությունները հաճախ խաչաձևվում են խոսողի վերաբերմունքի գործոնի հետ: Այս հանգամանքը զգալի չափով դժվարացնում է կետադրության կանոնարկումն ու կանոնների կիրառումը»²³: Կարծում ենք քննարկվող դեպքերի տրոհումը լեզվական այն իրողություններից է, որի կանոնարկումը կարելի է կատարել **գուգաձևության** հաստատումով: Այս եղանակավորող բառերի տրոհումը չունի քերականական իրողություններին բնորոշ այն «կաշկանդվածությունը», որը բխում է լեզվական ավանդույթից, լեզվի պատմությունից, զարգացման ներքին օրինաչափություններից և այլ հանգամանքներից: Կետադրության ոլորտը շատ դեպքերում կարծես թե զգալիորեն վեր է կանգնած այդ պատահարներից. դրա թերևս ամենաէական հիմքն ու հիմնավորումը խոսքային դադարներն են, շարահյուսական ինչ-ինչ կառույցներ, որոնց վերաբերյալ կարծիքները կարելի է մեկտեղել որոշ դեպքերում թողնելով համեմատաբար ազատ ընտրություն: Կարծում ենք, որ պատճառաբանված և արդյունավետ կլինի, եթե առայժմ ուսումնական ձեռնարկներում ընդունելի համարվի վերը նշված բառերի կետադրական երկձևությունը, տրոհության ազատ ընտրանքը, որը նույնպես խնդիր կանակարգելու մի տարբերակ է:

Բանալի բառեր – վերաբերականներ, տրոհության հարցեր, դադար, արդի արևելահայերեն, լեզվական նորմ, դասագիրք, տրոհության նշաններ

ЛИАНА САРКИСЯН – Некоторые вопросы пунктуации модальных слов в современном восточноармянском языке. – Пунктуация, связанная с некоторыми модальными словами, вызывает ряд вопросов. Постепенно возникли противоречия между правилами пунктуации и их реализацией. Наблюдается двойственная, или параллельная, тенденция при выделении знаками препинания ряда модальных слов; эта тенденция противоречит действующим правилам. В статье разобраны как соответствующие правила, зафиксированные в учебниках и учебных пособиях, так и противоречия и препятствия, мешающие их практической реализации. Исходя из нынешнего состояния пунктуации, а также из языковых закономерностей, изложены аргументы в пользу параллельной пунктуации, то есть свободного выбора – выделять или не выделять модальные слова знаками препинания.

Ключевые слова – модальные слова, вопросы пунктуации, пауза, современный восточноармянский язык, учебник, знаки препинания

²³ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 9:

LIANA SARGSYAN – *On Some Punctuation Issues of Modern Eastern Armenian Modal Words.* – In Modern Eastern Armenian, the punctuation of some grammatical tags raises confusion. Over time, some contradictions appear in the rules and structural usage of punctuation. There is a part of a quotation or parallel punctuation threads, which is contrary to the punctuation rules.

This article will detail the rules and threads of such contradictions and obstacles to the realization of the textbooks and instructional materials in Modern Eastern Armenian. Guided by this modern punctuation dilemma, as well as inter-linguistically attempt to justify and correct punctuation structures freely.

Key words: *modal words, punctuation issues, pause, modern Eastern Armenian, textbook, punctuation marks*